«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **«Ընտանեկան դաստիարակության ոճի ազդեցությունը կրտսեր դպրոցական անձի ձևավորման գործում»**

Հետազոտող ուսուցիչ՝ **Հասմիկ Հարությունյան**

Ուսումնական հաստատություն՝ **«Աբովյանի Վ. Համբարձումյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

1.1 Ընտանեկան դաստիարակությունը և կրտսեր դպրոցականի անձի ձևավորման հիմնախնդիրը 5

1.2 Սովորողների ընտանեկան դաստիարակության ազդեցությունը դպրոցում վերջիններիս վարքի և առաջադիմության վրա 9

1.3 Դպրոց-ծնող համագործակցության դերը սովորողի կրթության ու դաստիարակության վրա 12

ԳԼՈՒԽ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

2.1 Մանկավարժական մեր փորձից 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ընտանիքը հասարակության սկզբնական բջիջն է: Երեխայի դաստիարակությունը հարկավոր է սկսել ծնվելուն պես, դեռևս օրորոցում: Ընտանեկան դաստիարակության հաջողությունն ապահովող առաջին պայմանը համերաշխ ընտանիքի առկայությունն է: Ընտանիքում լավ փոխհարաբերությունների, առողջ մթնոլորտի առկայության դեպքում աճում են հանգիստ, հավասարակշռված, եռանդուն ու կենսուրախ մարդիկ: Երեխայի դաստիարակության հարցում մեծ նշանակություն ունեն ծնողների կամ օրինական ներկայացուցիչների փոխհարաբերությունները երեխաների հետ: Դա բարդ հարց է, որի լուծման ժամանակ առաջնակարգ նշանակություն է ստանում խստության և քնքշության չափը: Չի կարելի անընդհատ սիրել երեխային, անընդհատ գովասանքի արժանացնել, խրախուսել, կատարել նրա բոլոր պահանջները կամ ընդհակառակը՝ երեխային անընդհատ պարսավանքի ենթարկել, պատժել և այլն: Դրանք բոլորը պետք է լինեն չափավորված ու դուրս չգան անհրաժեշտության սահմաններից:

Լինելով երեխայի սոցիալականացման առաջին օղակը՝ ընտանիքը մշտապես համարվել է երեխայի անձի դաստիարակության կարևոր գործոն: Հայտնի իրողություն է՝ ծնող-երեխա փոխհարաբերությունները, որոնք ձևավորվում են ընտանեկան դաստիարակության հենքով, կազմում են ընտանիքում հարաբերությունների կարևորագույն և ամբողջական համակարգ: Այդ հարաբերությունները կարևոր են դպրոցականի անձի ձևավորման, նրա հոգեկանի բարենպաստ զարգացման և լիարժեք սոցիալականացման համար: Հետևաբար՝ ընտանեկան ոչ ճիշտ դաստիարակությունը, դրա գործառույթների ոչ լիարժեք կատարումը կարող է խախտել ծնող-երեխա նորմալ հարաբերությունները՝ առաջ բերելով էական դժվարություններ երեխայի վարքի և, ընդհանրապես, նրա անձի ձևավորման մեջ:

Վերջին ժամանակներում բավականին սրացել է ծնող-երեխա փոխհարաբերությունների, ընտանեկան դաստիարակության դպրոցականի անձի ձևավորման վրա դրանց ունեցած ազդեցության խնդիրը՝ կապված արդի հասարակության գլոբալացման, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի, տեղեկատվության հասանելիության և այլ գործոնների հետ: Ուստի կարելի է պնդել, որ կրտսեր դպրոցականների ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրն արդի հասարակության առջև ծառացած

հրատապ խնդիրներից է: Սույն խնդրի ուսումնասիրումն ու հետազոտումն ինչպես սցիալ-հոգեբանական, այնպես էլ մանկավարժական ու հասարակական արդիական հիմնախնդիրներից է:

Հետազոտական հարց: Ի՞նչ դեր ունի դպրոց-ծնող արդյունավետ համագործակցությունը սովորողի կրթության ու դաստիարակության վրա:

Հետազոտության նպատակը: Մեր հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել ընտանեկան դաստիարակության ոճի ազդեցությունը կրտսեր դպրոցական անձի ձևավորման գործում:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ տեսամեթոդական գրականությունը, համապատասխան իրավական ակտերը:
- Լուսաբանել ընտանեկան դաստիարակության դերը կրտսեր դպրոցականի անձի ձևավորման գործում:
- Կարևորել ընտանեկան կայուն միջավայրի դրական ազդեցությունը կրտսեր դպրոցականի կայուն ու ներդաշնակ զարգացման վրա:
- Դիտարկել ընտանիք-դպրոց համագործակցության կարևորության հիմնահարցը՝ կրտսեր դպրոցականի անձի ձևավորման վրա:

«Ընտանեկան կյանքի գլխավոր իմաստն ու նպատակը երեխաների դաստիարակությունն է»: *ՎԱՍԻԼԻ ՍՈՒԽՈՄԼԻՆՍԿԻ*

ԳԼՈՒԽ 1

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

1.1 Ընտանեկան դաստիարակությունը և կրտսեր դպրոցականի անձի ձևավորման հիմնախնդիրը

Ընտանիքը հանդիսանում է սոցիալ մշակութային այն միջավայրը, որտեղ երեխան ստանում է առաջին պատկերացումները ընտանեկան արժեքների, սովորույթների և ավանդույթների մասին: Ժամանակակից հասարակության պայմաններում ընտանեկան արժեքները գնալով կորցնում են իրենց իմաստը, ավանդույթները և սովորույթները վերափոխվում են՝ կարևորություն տալով օտարամուծություններին, ուստի անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ այս հիմնախնդրին: Յուրաքանչյուր ընտանիք ինքն է ստեղծում իր ընտանեկան սովորույթներն ու ավանդույթները՝ հաշվի առնելով իր ընտանեկան մթնոլորտը, ընտանիքի անդամների բնավորություններն ու նախասիրությունները: Ընտանեկան դաստիարակության մշակույթն ունի ոչ միայն պահպանող, այլև զարգացնող բնույթ: Ընտանեկան արժեքներն ամրապնդում են միության, հարգանքի և վստահության կապերը: Միմյանց մասին հոգ տանելը, տարեցներին հարգելը, տնային գործերի հետ համագործակցությունը, բարի և ազնիվ լինելը մարդկանց ստիպում է որպես լավ քաղաքացի հանդես գալ յուրաքանչյուր սոցիալական խմբում, որի մաս են կազմում:

Յուրաքանչյուր անձի ձևավորման, ֆիզիկական և մտավոր զարգացման գործընթացում ընտանիքը, ծնողներն ունեն անփոխարինելի դեր. այս միջավայրում է տեղի ունենում երեխայի առաջնային սոցիալականացումը, ձևավորվում դերային և վարքագծային կարծրատիպերը, արժեքային կողմնորոշումներն ու աշխարհայացքը: Առաջին հերթին ընտանիքն է հոգ տանում երեխայի անվտանգության, կարիքների մասին, կրթում ու դաստիարակում նրան, հոգեբանական աջակցություն ու հարմարավետություն ապահովում: Հետևաբար՝ բարդույթներից զերծ, հոգեբանորեն կայուն, հասարակության պահանջներն ընկալող և դրանց համարժեք արձագանքելու ունակ անձի ձևավորման առաջնային նախադրյալը բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ ու հոգեբանական և սոցիալական խնդիրները հաղթահարելու կարողություններ ունեցող, դաստիարակչական և սոցիալականացման գործառույթներ իրականացնող, երեխայի իրավունքները, նրա հանդեպ պարտականությունները գիտակցող և դրանք կյանքի կոչող ընտանիքի առկայությունն է. «Երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային

արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք»[1]:

Ազնվությունը, մարդասիրությունը, բարությունը, կենցաղային խնդիրներին դիմագրավելու կարողությունը ձևավորվում են միայն այն դեպքում, երբ երեխան մանկուց ականատես է եղել անկեղծ ու ջերմ մարդկային հարաբերությունների, ինչը ակնկալվում է ընտանիքում[2]: Երեխայի դաստիարակությունը վեհ, բայց նաև խիստ պարտավորեցնող առաքելություն է, որը ենթադրում է դրան նախապատրաստություն, մանկավարժական, հոգեբանական գիտելիքների ու հմտությունների ձեռքբերում:

Նկատենք, որ կրտսեր դպրոցական տարիքը ևս պահանջում է հատուկ վերաբերմունք նշանակալի մեծահասակների՝ ուսուցիչների և ծնողների կողմից, որոնցից կախված է կրտսեր դպրոցականի հոգեկան առողջությունը: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաները բնութագրվում են բարոյական, ինտելեկտուալ, հուզական, ֆիզիկական, գեղագիտական հատկությունների զարգացման շրջափուլով, ինչը կրտսեր դպրոցականի անձնավորության հոգեբանական առանձնահատկությունների զարգացման հիմքն են: Ուսումնական հաստատությունների կրթական միջավայրի ժամանակակից ուսումնասիրություններում աճում է ընտանիքի կրթական միջավայրի նշանակությունը: Աճում է ծնող-երեխա հարաբերությունների, ընտանիքում դաստիարակության մեթոդների և ոճերի, կրտսեր դպրոցականի անձնավորության հոգեբանական առանձնահատկությունների զարգացման մեջ ծնողական դերերի և վարքի դերը: Հետազոտողները հաշվի են առնում միջավայրի բոլոր տեսակները, ներկայացնում են դրա բնութագրիչները՝ ելնելով կառուցվածքի չափանիշներից և սուբյեկտների առաջատար գործունեությունից:

Ծնողների հետ փոխազդեցության ընթացքում կրտսեր դպրոցականի դրական հուզական վերապրումները ընտանիքում ստեղծում են փոխադարձ վստահության մթնոլորտ, որը պակաս կարևոր չէ կրտսեր դպրոցականի անձնային հատկությունների զարգացման համար: Առավել ևս ապացուցված է, որ մանկական սոցիալական միջավայրի կառուցման մեջ որոշիչ դերը ընտանեկան միջավայրինն է:

---

[1] «ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 41, կետ 2»:

[2] Ковтуненко Л. В. Семья как социокультурная среда воспитания и ресоциализации несовершеннолетних правонарушителей // «Вестник Воронежского института МВД России», 2012, № 3, с. 137-143.

Երեխա-ծնող ոչ արդյունավետ հարաբերություններում հուզական բաղադրիչի խանգարումներից են.

- ծնողների տագնապայնությունը և տարբեր ֆոբիաները
- ծնողական զգացմունքների պակաս զարգացվածությունը
- երեխաների նկատմամբ քնքշության, հոգատարության բացակայությունը:

Ծնողների, եղբայրների և քույրերի, տատիկների և պապիկների հետ շփման ընթացքում երեխան ստանում է օգտակար տեղեկատվություն, որը հանգեցնում է նրա հետագա զարգացմանը: Դրա հետ մեկտեղ ընտանիքի հուզական մթնոլորտը հիմք է հանդիսանում շրջապատող միջավայրում ստացած տեղեկատվության օգտագործման առումով կրտսեր դպրոցականի ինքնուրույնության և ակտիվության հետագա զարգացմանը: Վստահելի շփման, փոխադարձ հարգանքի, ցանկացած նոր գործի մեջ ծնողների փոխըմբռնման վրա հիմնված ծնող-երեխա փոխհարաբերությունները կրտսեր դպրոցականի գործողություններին վստահություն են ներշնչում, ինչը հանգեցնում է ոչ միայն իմացական որակների զարգացմանը, այլև այլ մարդկանց հետ շփման մեջ հոգեկան բարեհարմարությանը: Բազմամյա հետազոտությունների հիման վրա Լ.Ի.Բոժովիչը բացահայտել է, որ կրտսեր դպրոցականի անձի ձևավորումը որոշվում է նրան հասանելի մարդկային հարաբերությունների համակարգում զբաղեցրած տեղի և նախկին փորձի արդյունքում ձևավորված հոգեբանական առանձնահատկությունների հարաբերակցությամբ[3]: Երեխաների նկատմամբ ծնողների վերաբերմունքը մեծ նշանակություն ունի ընտանիքի կրթական միջավայրում կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունների զարգացման գործում և այդ պատճառով պետք է կառուցվի վստահության, սիրո, սեփական կրտսեր դպրոցականին ճանաչելու և, կախված տարիքային առանձնահատկություններից, դաստիարակության ընդհանուր մոտեցումները վերակառուցելու ունակության հենքի վրա:

Դպրոցում կարողունակահեն կրթության սկզբունքներից մեկը երեխաներին՝ պրոբլեմային իրադրության մեջ լուծումն ինքնուրույն գտնելու սովորեցնելու մեջ է: Այսպիսով, ծնողների վարքը հետագայում արտացոլվում է երեխաների վարքում, նրանց հոգեբանական առանձնահատկություններում, անձնային հատկությունների

[3] Блонский П.П. Психология младшего школьника. / Под редакцией А. И. Липкиной и Т. Д. Марцинковской. – М.: Изд–во «Институт практической психологии», Воронеж: НПО «МОДЭК», 1997.с. 75-297.

զարգացման մեջ, հասակակիցների հետ հարաբերություններում, սոցիալական շրջապատում ադեկվատ վարք դրսևորելու ունակության մեջ:

1.2 Սովորողների ընտանեկան դաստիարակության ազդեցությունը դպրոցում վերջիններիս վարքի և առաջադիմության վրա

Ընտանիքը, որպես դաստիարակության միջավայր, նրա ազդեցությունն անձի դաստիարակության գործընթացի և արդյունքների վրա շատ կարևոր են երեխայի բնականոն զարգացման համար: Սա այն միջավայրն է, որտեղ ծնվում ու աշխարաճանաչողության սկզբնական քայլերն է անում մանուկը, պատանին դեռահասը, ուստի ծնողի, ընտանեկան միջավայրի ուղիղ ներգործությունը ողջ կյանքի վրա ունենում է մեծ ազդեցություն: Երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից: Երեխայի լավագույն շահերի ապահովումն ուղղված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացմանը, ինչպես նաև երեխայի զարգացմանը՝ հաշվի առնելով երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի և դաստիարակության հնարավորությունը, ընտանիք վերադառնալու կամ ընտանիքի հետ ապրելու կարևորությունը, երեխայի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը, ազգային պատկանելության հարցը, երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը կամ դաստիարակությունն ու նշանակությունն ընտանեկան միջավայրում և այլ կարիքները, պահանջները և շահերը (այսուհետ՝ Երեխայի լավագույն շահեր)[4] : Կարևոր հանգամանք է երեխայի կարգավիճակը ընտանիքում: Այս հարցը նույնպես պետք է դնել ընտանիք-դպրոց համագործակցության ակունքում: Այս մասով իր կարևոր դերակատարում ունի ունի ուսումնական հաստատության սոցիալական մանկավարժը: Սոցիալական մանկավարժը, համագործակցելով մանկավարժական մյուս աշխատողների հետ, ուսումնասիրում է սովորողների կյանքի պայմանները, ընտանիքի առանձնահատկությունները, ընտանեկան փոխհարաբերությունների ազդեցությունը սովորողի վրա, նրանց սոցիալական միջավայրը, շփումները, հետաքրքրությունները, հաղորդակցման դժվարությունները, սոցիալական միջավայրում հարմարման և պաշտպանվածության մակարդակը, դուրս է բերում կարիքները և դրանց համապատասխան կազմում է միջամտության պլան, որը ներառում է կարիքների բավարարմանն ուղղված միջոցառումները, ժամկետները, պատասխանատուները[5] : Որպեսզի դաստիարակչական գործընթացն ընտանիքում

[4] ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 1, կետ 7:

[5] ՀՀ Կառավարության որոշում https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808

անցնի արդյունավետ, հարկավոր է, ու ծնողներն առաջին հերթին բացառեն որևէ բռնություն, վատ կամ բացասական ներգործություն երեխայի վրա: Սա կարող է կազմաքանդել սովորողի բնականոն հոգեկան զարգացումն ու անդառնալի հետևանքներ ունենալ: Դաստիարակության գործում միշտ, այսօր առավելապես, կարևորվել է կարևորվել է երեխայի նկատմամբ ծնողի ճիշտ դրսևորումները: Ծնողական սերն ու հոգատարությունը կենսական անհրաժեշտություն են երեխայի գոյապահպանման համար: Հակառակ դեպքում՝ մի կողմից անտարբերությունն ու եսասիրությունը, մյուս կողմից ծնողական սիրո բացակայությունը հանգեցնում են ատելության, արհամարանքի՝ ծանրացնելով թե' երեխայի, թե' ծնողի կյանքը[6] :

Այսօր դպրոցում լրջագույն խնդիրներ են առաջանու�՝ կապված ծնողների որոշ մասի ծնողավարական հմտությունների հետ, ուստի սովորողների հետ ունեցած որոշակի դժվարությունների հիմնական դրդապատճառները կարելի է փնտրել հենց ծնողների մեջ: Ընտանիքը փոքրիկ հասարակություն է, որի ամբողջականությունից է կախված մարդկային ամբողջ մեծ հասարակությունը: Կարգապահության լավագույն դպրոցը հենց ընտանիքն է, որի գլխավոր իմաստն ու նպատակը երեխաների դաստիարակությունն է, իսկ երեխաների դաստիարակության գլխավոր դպրոցը ծնողների փոխհարաբերություններն ու վերաբերմունքն է միմյանց նկատմամբ: Ուստի, ընտանեկան դաստիարակության շատ դժբախտությունների արմատները թաղված են հենց այնտեղ, ուր ծնողները երեխային մանկությունից չեն սովորեցրել ղեկավարել սեփական ցանկությունները, չեն սովորեցրել ճիշտ վերաբերվել մեծերին, բարեվարք պահել շրջապատում: Առանց ընտանեկան ճիշտ դաստիարակության՝ դպրոցում սովորողին կառավարելն ու վերահսկելը անչափ դժվար է ուսուցչի համար: Այն ծնողներն են շահում, ովքեր երեխաների դաստիարակությունն իրականացնելիս ամեն ինչի չափը դարձնում են սովորույթ, բնավորության գիծ, ամենօրյա կանոն, ու դրանցով այնպես են առաջնորդվեւմ, ինչպես օրենքը հարգող դատավորը: Ծնողները դասղեկի, ուսուցիչների անմիջական օգնությանմբ պարտավոր են սիրո զգացմունքներ դաստիարակել :

Ծնողը պիտի ընկեր լինի իր երեխայի համար, հաճախակի զրուցի նրա հետ կյանքից, բարուց ու չարից, լավ ու վատից, հասարկությունից, արժեքներից, հայրենիքից, ծնողից, տնից, հազար ու մի կարևոր մանրուքներից: Այս բոլորն էլ ի վերջո կկազմեն այն դաստիարակությունը, այն արժեքային համակարգը, որ ծնողը կփոխանցի իր երեխային: Հաճախ ենք տրտունջներ լսում դասարանում սովորողների վարքից, կարգապահությունից: Իսկ ի՞նչ ակնկալիք կարելի է ունենալ

[6] ՀՊՄՀ, «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում», Երևան, 2016, էջ 11:

նման սովորողներից, ովքեր դասերին հաճախում է հենց այնպես, առանց ուշադրության, առանց պատասխանատվության տարրական զգացումի, անտարբեր են դասարանի մաքրության, աշխատանքային սեղանի կոկիկության, գեղեցիկ ձեռագրի և այլ նմանատիպ կարևոր մանրուքների նկատմամբ: Ի՞նչ ակնկալել այն աշակերտից, որ դպրոց է գալիս զուտ ընկերներին տեսնելու, նրանց հետ չարաճճիություններ անելու և ուրախ ժամանակ անցկացնելու համար: Նման աշակերտին կարելի է փրկել միայն ճիշտ ու կանոնավոր դաստիարակությամբ, իսկ այստեղ կրկին կցանկանանք կարևորել ծնող-դպրոց կապը:

Այսպիսով, կարծում ենք, որ որևէ կերպ չի կարելի անտեսել ծնողին: Եթե վերջինս չի պատկերացնում սեփական երեխայի ուսումնական հարցերում իր կարևոր դերակատարումը, ապա հարկավոր է, որ ուսուցիչը սկսի հենց այդ կետից՝ ծնողին բերել համագործակցային դաշտ:

1.3 Դպրոց-ծնող համագործակցության դերը սովորողի կրթության ու դաստիարակության վրա

Ինչպես գիտենք, ուսումնական գործընթացի մասնակից են հավարվում սովորողը, սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը և ուսուցիչը: Վերջիններիս իրավունքներն ու պարտավորությունները սահմանված են օրենքով: Ուսուցչը ուսումնական գործընթացի հիմնական կազմակերպիչն ու իրականացնողն է, ով մեծագույն պատասխանատվություն է կրում սովորողի՝ ՀՊՉ-ի վերջնարդյունքներին հասնելու համար: Սակայն այս տեսակետից շատ կարևոր է նաև սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի պատասխանատու վերաբերմունքը կրթական գործընթացին, վերջինիս կողմից ուսուցչի հետ համագործակցելու, սովորողին վերահսկելու ու առաջնորդելու գործառույթը: Սովորողի կրթական կարիքների հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության հիմքում պետք է դրված լինեն ընդհանուր հետաքրքրություններն ու նպատակները: Այդ փոխհարաբերությունների հիմքում պետք է դրվեն միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքները:

Նման միջավայրի ապահովումը կարող է խթանել ուսուցիչի աշխատանքի արդյունավետությունը, քանի որ ծնողների հետ համատեղ ջանքերով կարելի է հասնել սովորողի՝ ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ կարողությունների անցնցում ձևավորմանը: Սովորողին, ծնողներին և ուսուցիչներին պետք է միավորեն ընդհանուր մտահոգություններ, խնդիրներ, նպատակներ ու դրանց հասնելու լուծումներ, եղանակներ: «Սովորողի ծնողն իրավունք ունի համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով[7]»: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը երկարատև ու բարդ գործընթաց է, որի հիմքում պետք է դրված լինեն մի շարք սկզբունքներ, որոնց թվում են.

- Փոխադարձ հարգանքը ծնող-ուսուցիչ հարաբերություններում
- Առողջ բարոյահոգեբանական միջավայրը
- Ընդհանուր շահի շուրջ բանակցելու, ելքեր գտնելու կարողությունը
- Արդյունավետ հետադարձ կապի մեխանիզմների գործարկումը
- Մշտադիտարկումը

[7] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 28, կետ 2:

- Սխալների ընդունումը, վերլուծություն, թերի կողմերի արձանագրումը
- Ինքնանդրադարձ կատարելու կարողությունը
- Հումանիստական մղումները
- Սեփական շահի ստորադասումը
- Անձնային բարձր որակների դրսևորումը

Այս երկու օղակների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվի պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և ուսուցիչները պատասխանատվություն են կրում միևնույն սովորողի կրթության ու դաստիարակության համար, հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի, երբ վերջիններս մշտապես կապ պահեն միմյանց հետ, ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, ինչպես նաև փորձեն համատեղ ուժերով մշակել դաստիարակչական մեխանիզմներն ու դրանց լուծման ուղիները: Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորող հանգամանքներից է ծնողների իմացական կարողությունները, հայացքներն ու դիրքորոշումները: Շատ կարևոր է նաև ծնողի կողմից ազնիվ ու անվերապահ մոտեցումն ուսուցչին, դպրոցին: Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում[8]:

Ուսումնական գործընթացին ծնողների ներգրավվածությունը մեծապես կարող է պայմանավորել սովորողների հաջողությունը: Անկախ ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակից, ծնողի կրթության աստիճանից՝ վերջինիս ներգրավվածությունը սովորողի կրթության գործընթացին անփոխարինելի կարելի է համարել սովորողի զարգացման վրա թողած ազդեցության առումով: Այն սովորողները, ում ծնողներն ավելի բաց են համագործակցության համար, հաճախակի են հետաքրքրվում իրենց երեխաների վարքով ու առաջադիմությամբ, ավելի են մոտիվացվում: Արդյունքում, նրանք դառնում են ավելի պատասխանատու,

[8] Ծնողների ներգրավվածությունը, Թբիլիսի, 2015, էջ 3: http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf

բարձրանում է աշխատունակության մակարդակը և ունենում են հաջողություններ: Անշուշտ, ծնողների ներգրավվածությունը դպրոցի, դասարանի սովորողի դպրոցական կյանքին դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը նպաստում է վերջիններիս հետ բարեկամական հարաբերությունների հաստատմանը՝ ստեղծելով բարոյահոգեբանական կայուն միջավայր: Այսուհանդերձ, այս համագործակցության շրջանակներում հնարավոր են նաև կոնֆլիկտներ, անհամաձայնություններ, որոնք կարող են վնաս բերել բուն ուսումնական գործընթացին, մտցնել լարվածություն: Ուստի շատ կարևոր է երկուստեք պահպանել բարեվարքության կանոնները, լսել խնդիրն ու բերել հիմնավոր փաստարկներ, չառաջնորդվել բացառապես սեփական շահով: Դպրոցում տարբեր կոնֆլիկտների զանազան պատճառներ կան, բայց որքան էլ տարօրինակ թվա, կարող է նման իրավիճակ ստեղծվել սովորողի և ուսուցչի միջև: Ի վերջո, դպրոցում երեխաները խաղում են, հաճախ չեն ենթարկվում, երբեմն էլ հրաժարվում են դասին մասնակցել: Ուսուցիչը, իհարկե, դիտողություն է անում, փորձում ինչ-որ կերպ ազդել՝ արդյունքում ծնողին հրավիրելով դպրոց: Այս պարագայում փթե ծնողը փոխըմբռնում չի գտնում ուսուցչի հետ, ապա դա կարող է բացասաբար անդրադառնալ հենց սովորողի վրա վրա: Արդյունքում ստեղծվում է ՝ ուսուցիչ-սովորող-ծնող կոնֆլիկտ: Ահա թե ինչպես է սովորողի և ուսուցչի աննշան դպրոցը, այլ մանկավարժական աշխատողներ: Ուստի ցանկացած պարագայում բախումը սովորողի և ուսուցչի միջև անթույլատրելի է, հարկավոր է միշտ բահպանել էթիկայի կանոններն ու իմանալ սեփական իրավունքներն ու պարտականությունները:

Այսպիսով, վստահաբար կարող ենք ասել, որ կրթայան համակարգում ավելի լավ արդյունքների հասնելու, սովորողների կրթության ու դաստիարակության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Իսկ ծնողները, առաջնային համարելով սեփական երեխայի լավ ու որակյալ կրթությունը՝ պետք է մշտապես համագորցակեն դպրոցի մանկավարժական աշխատողների, այլ սովորողների ծնողների հետ: Ծնողների հետ մշտական կապի մեջ լինելու, հնարավոր խնդիրները, դասարանում առկա կազմակերպչական հարցերը քննարկելու համար դասարանի ղեկավարը սահմանված կարգի համաձայն պետք է անցկացնի ծնողների հետ ընդհանրական հանդիպումներ՝ ծնողական ժողովներ: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական ժողովների ժամանակ առաջացած խնդիրները, քննարկվում են սովորողների հնարավոր վարքային, կրթական և այլ բնույթի

հարցերը: Այստեղ կարևոր է ծնողական համայնքի արձագանքը՝ հետադարձ կապ ստեղծելու կարողությունը: Շատ կարևոր է, որ ծնողն ընդունի և' դրական և' բացասական կամ քննադատողական դիտարկումները: Ծնողական ժողովների ընթացքում կատարած արձանագրումների և խնդիրների բարձրաձայնման հատվածում կարող են ներկա գտնվել նաև այլ ուսուցիչներ, սոց. մանկավարժներ, հոգեբաններ: Այսպես քննարկումն ավելի արդյունավետ և կառուցողական բնույթ կարող է կրել: Հաճախ խնդիրը ոչ թե դպրոցի կամ այլ սովորողների հետ հարաբերությունների մեջ է նկատվում, այլ ծնող-երեխա փոխհարաբերություններում: Այստեղ և՛ դպրոցն ունի իր անելիքը: Ծնող-երեխա կոնֆլիկտային իրավիճակների դեպքում ուսուցիչն ու հեգեբանը աշխատանք են տանելու ծնողների հետ, և այդ աշխատանքի գլխավոր նպատակը ծնողների կողմից երեխայի պրոբլեմի, նրա անհատականության օբյեկտիվ ընկալումն է, երեխայի հետ հաղորդակցման ընթացքում իր դաստիարակչական մարտավարության, ինչպես նաև կրթական գործընթացի այլ մասնակիցների հետ համագործակցության որոշումն է: Ընտանիքին ցուցաբերվող աջակցության մեջ կարևոր է ծնողների և մանկավարժների գործողությունների համաձայնեցվածությունը: Ցանկալի է, որ դժվար երեխան իր ժամանակի յուրաքանչյուր պահին գտնվի որևէ կողմի պատասխանատվության գոտում: Այս ջանքերը անհրաժեշտ են, քանի որ նույնիսկ մեկ «պրոբլեմային» երեխան կարող է էական ազդեցություն թողնել դպրոցի այլ երեխաների վրա[9]:

Այսպիսով, եկանք այն համոզմունքին, որ ուսուցիչներն ու ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը սովորողին տալիս է գիտական գիտելիքներ, դաստիարակում է, զարգացնում է մի շարք կարողունակություններ: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու, հարգելու, գնահատելու կարողությունները: Անձի ներդաշնակ զարգացման համար այս բոլոր որակներն էլ խիստ անհրաժեշտ են:

[9] Զադոյան Ա., «Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձևավորման գործում», ՇՊՀ, գիտական հոդված, 2014, էջ 190:

ԳԼՈՒԽ 2

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

2.1 Մանկավարժական մեր փորձից

Աշխատանքի փորձարարական հատվածը նպատակ ունի ծնողների շրջանում նախօրոք իրականացված հարցումների արդյունքներով վերահաստատել աշխատանքի տեսական մասում կատարած մեր պնդումները: Հերթական ծնողական ժողովից հետո ժողովին մասնակցող թվով 20 ծնողների շրջանում իրականացվեծ սոցիոլոգիական հարցում: Դիտարկենք հետազոտության արդյունքները:

N	*Հարցադրում*	*Պատասխաններ*
1	**Արդյունավե՞տ է արդյոք իրականացվում Ձեր երեխայի դաստիարակության գործընթացն ընտանիքում:** - **Այո** - **Ոչ**	
2	**Ձեր երեխայի դաստիարակության գործընթացնում առկա՞ է արդյոք համատեղ աշխատանք, մանկավարժական աշխատողների հետ:** - **Այո** - **Կան դժվարություններ**	
3	**Ձեր երեխան հաճույքո՞վ է հաճախում դպրոց:** - **Այո** - **Ոչ** - **Երբեմն**	
4	**Դիմու՞մ եք դպրոցի օգնությանը՝ Ձեր երեխայի վարքային խնդիրները համատեղ լուծելու խնդրանքով:** - **Այո** - **Երբեմն**	
5	**Տիրապետու՞մ եք Ձեր երեխայի դաստիարակության, ծնողական վարվեցողության ընդունելի կանոններին:** - **Այո** - **Ոչ**	

Եթե ընդհանրացնենք հարցված ծնողների պատասխանները, ապա կունենանք հետևյալ պատկերը: Անշուշտ, բոլոր հարցված ծնողներն էլ հարցմանը մոտեցան

ամենայն պատասխանատվությամբ՝ հասկանալով, որ հետազոտության այս ձևաչափն առաջին հերթին իրենց հնարավորություն կտա ինքնանդրադարձ կատարելու՝ հասկանալու համար, թե ինչ բացթողումներ ունեն իրենց երեխաների դաստիարակության գործում: Արձանագրվեց, որ հարցվածների միայն շատ փոքր մասը դժվարություններ ունի սեփական երեխայի դաստիարակության հարցում և բավարար չի համարում իր՝ ծնողավարական հմտություններն ու կարողությունները:

Մեծ էր ինքնավստահ, դպրոց-ծնող կապը կարևոր համարող, սեփական երեխայի շահը գիտակցող ծնողների թիվը, ինչը մեծագույն ձեռքբերում կարելի է համարել: Ուրախալի է, որ ծնողների գորակշիռ մասը կարևոր է համարել դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության դերը՝ երեխայի մոտ հնարավոր վարքային շեղումները համատեղ հաղթահարելու տեսանկյունից: Այդուհանդերձ, ծնողների որոշ մաս էլ մատնանշել էր, որ երեխայի դաստիարակության ընթացքում դժվարություններ ունենում է, ուստի կրկին կարևոր համարենք դպրոց-ընտանիք կապի շարունակականության ապահովման անհրաժեշտությունը՝ կրտսեր դպրոցականի ուսումնադաստիարակչական գործընթացն արդյունավետ պլանավորելու և իրականացնելու համատեքստում:

Հաշվի առնելով նոր ժամանակների մարտահրավերները, կրթական համակարգի պահանջներն ու սովորողների՝ ամենօրյա ռեժիմով փոփոխվող հետաքրքրություններն ու պահանջմունքները՝ կարծում ենք, որ ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը պետք է հնարավորություն ստանա էլ ավելի շատ տեղեկություններ ունենալու այն մասին, թե ինչով է զբաղվում իր երեխան դպրոցում, արտադասարանական կամ արտադպրոցական միջոցառումների ժամանակ, ինչ հետաքրքրություններ ու նախասիրություններ ունի: Այս ամենն անհրաժեշտ է նրա համար, որ հնարավոր լինի կանխել հնարավոր բացասական երևույթները: Այսպես, թե' ծնողը, թե' ուսուցիչը վստահ կլինեն, որ իրավիճակն իրենց վերահսկողության տիրույթում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ավանդաբար կրթության հիմնական ինստիտուտը ընտանիքն է: Այն, ինչ երեխան ձեռք է բերում ընտանիքում մանկության տարիներին, նա պահպանում է իր հետագա կյանքի ընթացքում: Ընտանիքի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ երեխան գտնվում է դրանում իր կյանքի զգալի հատվածում, և անհատականության վրա նրա ազդեցության տևողության առումով կրթական հաստատություններից ոչ մեկը ի վիճակի չէ համեմատել ընտանիքի հետ: Այն դնում է երեխայի անհատականության հիմքերը: Ընտանիքը մեծ ազդեցություն ունի երեխայի անհատականության զարգացման վրա: Ընտանիքի հուզական առողջությունը ոչ միայն բարեկեցիկ ընտանիքի հիմքն է, այլ նաև ընտանեկան հարաբերությունների մշակութային և ներդաշնակ ձևի իմաստուն կանոն: Ծնողների արարքը կարելի է բացատրել որպես իրենց երեխայի ապագայի մտահոգություն, բայց եթե երեխաների նկատմամբ վերահսկողությունը հաջող լինի, ապա երեխան կարող է բաց թողնել անկախ ապրելակերպին ավելի լավ տիրապետելու հնարավորությունը: Սույն հետազոտական աշխատանքի շրջանակներում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- հնարավորինս պետք է խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից, հատկապես երեխաների ներկայությամբ
- անմիջապես արձագանքել երեխայի մոտ թեկուզ չնչին բացասական վարքագծի դրսևորումներին
- մշակել ներընտանեկան խնդիրները հմտորեն շրջանցելուտարբերակներ և հնարավորության դեպքում երեխային աննկատ կերպով ներգրավել այդ գործընթացում
- եթե կոնֆլիկտի մասին լռել և հմտորեն շրջանցել հնարավոր չէ, ապա պետք է անպայման երեխային ասել ճշմարտությունը և լուծումներ փնտրել միասին,
- միշտ հարկավոր է երեխային զբաղեցնել հետաքրքիր ժամանցով և երբեք չաղավաղել նրա մանկական հիշողությունները,
- ընտանեկան դաստիարակությունը պետք է օգնի նրան լինել ոչ թե ծնողի նման, այլ իր նման,
- պետք է հարգանքով վերաբերվել այն ամենին, ինչ երեխան անում է:
- պետք է երեխային բացատրել, որ ձախողումը փորձ է, որն անհրաժեշտ է

ապագա նպատակներին հասնելու համար:

Այսպիսով, երեխայի մոտ կայուն ու դրական զարգացման ապահովման հիմքը մենք տեսնում ենք ընտանիքում խաղաղության ու համերաշխության մթնոլորտում: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է ծանր բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական: Ելնելով վերը շարադրվածից՝ կարելի է ասել, որ երեխաների դաստիարակությունը բարդ, պատասխանատու գործ է, որը մեծապես պայմանավորում է վերջինիս կայուն զարգացումն ու ձևավորումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «ՀՀ ընտանեկան օրենսգիրք»:
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
3. https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808 ՀՀ Կառավարության որոշում:
4. Ամիրջանյան Յու, Սահակյան Ա., «Մանկավարժություն», Երևան, 2005:
5. Զադոյան Ա., «Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձևավորման գործում», ՇՊՀ, գիտական հոդված, 2014:
6. ՀՊՄՀ, «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում», Երևան, 2016:
7. Ծնողների ներգրավվածությունը, Թբիլիսի, 2015, էջ 3 http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf
8. Ковтуненко Л. В. Семья как социокультурная среда воспитания и ресоциализации несовершеннолетних правонарушителей // «Вестник Воронежского института МВД России», 2012, № 3.
9. Блонский П.П. Психология младшего школьника. / Под редакцией А. И. Липкиной и Т. Д. Марцинковской. - М.: Изд-во «Институт практической психологии», Воронеж: НПО «МОДЭК», 1997.